**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2**

ք. Երևան «12» 12 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սեդոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ հատուկ հսկողության մասնաշենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնել շին. աշխատանքների իրավերով մասնակիցներից պահանջվող լիցենզիաների ցանկը,

դ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

ե. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում  հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն  ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

**4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 54 000 000 (հիսունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկ ըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ), բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Յուրաքանչյուր համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, հանրապետության հրապարակ կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011044436<br>ՀՎՀՀ 02565827 | «Երևաննախագիծ» ՓԲԸ<br>ք. Երևան, Բուզանդի 1/3,<br>«Էվոկաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1660000215670100<br>ՀՎՀՀ 02500241 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| _______________ Գ. Եղիազարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | _______________ Ա. Սեդոյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
12.12. 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71241200/32 | ՀՀ դրամ | 54 000 000 | 1 | ՀՀ Երևան, Նուբարաշեն վարչ. շրջան 1/3 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 180 օրացուցային օրը ներառյալ |

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ հատուկ հսկողության մասնաշենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման**

| | | |
|---|---|---|
| 1. | **Նախագծման հիմքը** | ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 122-Ն որոշում |
| 2. | **Պատվիրատու** | **ՀՀ քաղաքաշինության կոմիտե** |
| 3. | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր** | Ճարտարապետահատակագծային առաջադրանքը և ենթակառուցվածքների վերաբերյալ տեխնիկական պայմանները կամ դրանց հնարավորության վերաբերյալ շահագործողի գրությունները կտրամադրվեն պատվիրատուի կողմից: |
| 4. | **Նախագծման փուլեր** | նախագծային փաստաթղթերի մշակումը նախատեսվում է «**Նախագիծ**» և «**Աշխատանքային փաստաթղթեր**» 2 (երկու) փուլով |
| 5. | **Ելակետային տվյալներ** | Հասցե՝ Երևան, Նուբարաշեն վարչ. շրջան 1/3<br>Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 01032018-01-0111<br>Կադաստրային ծածկագիր՝ 01-010-0101-0002<br>Հողամասի մակերեսը կազմում է 7"02808 հա: |
| **Նախագծերի կազմման համար հիմք հանդիսացող գործընթացներ** | | |
| 6. | **Ինժեներագեոդեզիական հանութագրում, հողհատկացման հիմքերի ձեռքբերում** | Իրականացնել տարածքի գեոդեզիական հանութագրում, հատակագծերի և բնորոշող կտրվածքների կազմում՝ մշակում՝ համաձայն ՀՀՇՆ I-2.01-99 «Ինժեներական հետազննություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերի:<br>Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագործող կազմակերպությունների հետ:<br>Ամրագրել և ներկայացնել հենանիշերի (репер) ցուցակ |
| 7. | **Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություն** | Ուսումնասիրել ելակետային բաժնում նշված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն ու տեխնիկական պահանջներ, ըստ մանրամասն նկարագրության, հորատահանուկի լաբորատոր փորձարկման արդյունքների որոշել գրունտների տեսակները, ինչպես նաև դրանց մշակման կարգերը:<br>Անհրաժեշտության դեպքում իրականցնել լրացուցիչ ինժեներաերկրաբանական հետազննության հորատումներ՝ ճարտարապետի հանձնարարականով, գեոդեզիական հանույթի հատակագծում նշված |

| | | |
|---|---|---|
| | | կոորդինատներով, որոնք հնարավորինս մոտ պետք է լինեն կրող առանցքներին:<br>Հորատահանուկի(керн) համար ապահովել պահպանում, նմուշների համար նախատեսված արկղերով մինչև հիմքի աշխատանքների ավարտ:<br>Բացի այդ, գոյություն ունեցող մասնաշենքի և հիմքերի քանդման արդյունքում առաջացող փոսորակը նախագծման նախապատրաստական փուլում կլինի փաստացի իրավաճակի լավագույն ուսումնասիրության տարածք: որի համար կպահանջվի ինժեներաերկրաբանական լրացուցիչ հետազննություն:<br>Գրունտային ջրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: |
| 8. | **Ինժեներական հաղորդակցուղիների ուսումնասիրություն** | Գոյություն ունեցող արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, եզրակացությունների ձեռքբերում և հատակագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում |
| 9. | **Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ** | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին<br>ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին<br>Ինժեներական հաղորդակցուղիների մատակարար կազմակերպություններ՝ ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, կապի համակարգեր<br>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան |
| 10. | **Կառույցի բնութագիրը և նախագծային պահանջներ** | Նախագծային լուծումները մշակել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունիսի 25-ի N 12-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ» շինարարական նորմերի հիմնական պահանջներին համապատասխան:<br>• Նախատեսվում է մշակել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ հատուկ հսկողության նոր 120 մահճակալ հզորությամբ մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր<br>• Հիվանդանոցային մասնաշենքը նախատեսել նկուղային մեկ հարկաբաժնով և վերգետնյա եռահարկ հատվածով (առանձին կառուցվող կամ հիմնական շենքին կցակառույց մասնաշենքով/ մասնաշենքերով, օժանդակ շինություններով),<br>• Անհրաժեշտ սենքերը, սենյակները, օժանդակ տարածքները ներկայացված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված Հավելված N 1.1-ում, Հավելված N 1.2-ում, Հավելված N 1.3-ում<br>Նախատեսել՝<br>• Ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ<br>• Շենքի հարկայնությունը՝ ըստ առաջադրանքում պահանջված սենքերի,<br>• Նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման (այդ թվում պահուստային-ավտոնոմ), հողանցման/ համակարգերի կառուցում, դրենաժային համակարգի կառուցում, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման, տանիքի ջրահեռացման, ըստ պահանջի՝ հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, ինքնաշխատ հրդեհաշիջման, տեսահսկման, գազամատակարարման կապի, անվտանգության, շենքի արդիական ներքին հարդարում,<br>• Անհրաժեշտության և տեխնիկական պայմանի պահանջի դեպքում նախատեսել՝ համապատասխան էլեկտրական ենթակայան կամ էլեկտրամատակարարման մալուխագիծ,<br>• շենքը պետք է ապահովված լինի տարբեր SS համակարգերով և գործիքներով (ինտերնետ, ներքին մոնիթորինգ, անվտանգության սարքավորումներ),<br>• նախատեսել շենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված |

| | | |
|---|---|---|
| | | սանհանգույցներ՝ **համապատասխան ինվենտարով,** բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, **համապատասխան հիմնավորմամբ վերելակ կամ վերհան սարքի անհրաժեշտություն:**<br>• Նախագծում կաթսայատուն նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում **նախագծողի կողմից:**<br>• նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատում, արտաքին լուսավորություն, ավտոկայանատեղի՝ ըստ անհրաժեշտության ոռոգման համակարգ, ինչպես նաև արտաքին հաղորդակցուղիների կառուցման, վերակառուցման կամ քանդման և այլն (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն), էներգետիկ նշանակության կառույցներ՝ սարքեր-սարքավորումներ (էլեկտրա ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,<br>• համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ նախագծում նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար<br>• հիվանդանոցային համալիրը համալրել էներգախնայող և էներգաարդյունավետ համակարգերով,<br>• նախատեսել հիվանդանոցային համալիրի տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն (այդ թվում վթարային կամ պահուստային լուսավորության համակարգով), անցուղիներ, բուժօգնության ավտոմեքենաների համար կայանատեղի՝ վերգետնյա և ստորգետնյա, ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման) արտաքին հաղորդակցուղիների կառուցում-վերակառուցում և այլն (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ),<br>• ավտոմեքենաների կայանատեղիները՝ ստորգետնյա և վերգետնյա նախատեսել էլեկտրալիցքավորման տերմինալների տեղադրմամբ,<br>• պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի (ներառյալ սպորտային) վերաբերյալ մասնագրերում ներառել պահանջվող մանրամասն տեխնիկական բնութագրերը, անհրաժեշտության դեպքում հաշվարկներով հիմնավորված:<br>• Նախագծման ընթացիկ միջոցառումները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները (այդ թվում հաշմանդամների տեղաշարժի համար մատչելի պայմանների ապահովման) և օգտագործելով արդի մոտեցումներ, ծագած բոլոր հարցերը քննարկելով պատվիրատուի հետ:<br>• Նախագծի վերաբերյալ այլ մանրամասնությունները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ:<br>• Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):<br>• Ըստ անհրաժեշտության իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում |
| 11. | **Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ** | Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝<br>• «Քաղաքաշինության մասին» օրենք<br>• «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք<br>• «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2007 թվականի մարտի 30-ի կոնվենցիա<br>• «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրաման, |

| | | |
|---|---|---|
| | | • ՀՀՇՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմեր, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 25 հունիսի 2024 թվականի N 12-Ն հրաման<br>• ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 14.10.14 թ N 263-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրաման<br>• ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմեր, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի ապրիլի 4-ի N 06-Ն հրաման<br>• ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրաման<br>• ՀՀՇՆ 22-02.01-2023 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 09-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003 թվականի մայիսի 13-ի **«ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր»** շինարարական նորմերը հաստատելու մասին» 2003 թվականի մայիսի 13-ի N 28-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 22-ի «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 12-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N 253-Ն հրաման,<br>• ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի ապրիլի 13-ի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 56-Ն հրաման,<br>• ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թվականի N 82-Ն հրամանում փոփխություն կատարելու |

| | | |
|---|---|---|
| | | Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրաման<br>• «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրաման,<br>• «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թվականի N 82-Ն հրմանում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրաման<br>• ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2005 թվականի մայիսի 2-ի N 75-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2024 թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն հրաման,<br>• ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 8-ի N 16-Ն հրաման<br>• ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» N 1504-Ն որոշում,<br>• ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ<br>• ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> N 596-Ն որոշում<br>• ՀՀ կառավարության 13.12.2007թ <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային |

կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 1490-Ն որոշում,

- ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թվականի N 82-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 14-ի N 02-Ն հրաման
- ՀՀՇՆ 53-01-2020-«Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 104-Ն հրաման
- ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում» շինարարական նորմեր, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրաման
- ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. Էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 31-Ն հրաման
- ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2024 թվականի փետրվարի 1-ի N06-Ն հրաման
- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրաման
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման,
- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»
- «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին», Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1219-Ն որոշում
- «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին», Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի N 1228-Ն որոշում
- «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-սթկ) նորմատիվները հաստատելու մասին»,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշում

***ՀՀ առողջապահության նախարարի հրամաններ՝***

| | | |
|---|---|---|
| | | «Աշխատանքային գոտու օդում և մթնոլորտային օդում հիգիենիկ նորմերը հաստատելու մասին<br><br>«Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»<br><br>«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N 2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»<br><br>«Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին»<br><br>«Ախտաբանաանատոմիական բաժանմունքների, հյուսվածքաբանական լաբորատորիաների տեղակայմանը, կառուցվածքին, ներքին հարդարմանը, գույքի և սարքավորումների շահագործմանը, միկրոկլիմային, օդափոխանակությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջներ» N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին»<br><br>«Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-III-2.13 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»<br><br>«Կենսաբանական, քիմիական և ճառագայթային լաբորատորիաների շահագործմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-032-2016 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին»<br><br>«Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»<br><br>«Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին»<br><br>«Դեղատներին և դեղատնային կրպակներին ներկայացվող» N 2-III-2.2.7 սանիտարական կանոնները հաստատելու մասին» |
| 12. | **Նախագծման փուլերը** | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝**<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն:<br>Նախագծային աշխատանքների իրականացում 2 (երկու) փուլով<br>Փուլ 1 – «Նախագիծ»<br>Փուլ 2 - «Աշխատանքային Փաստաթղթեր» |
| 13. | **Փուլ 1-«Նախագիծ»** | Նախագծում ներառել առաջադրանքի 6, 7 և 8-րդ բաժիններով պահանջված ուսումնասիրությունների արդյունքները:<br>Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ներկայացվում է մշակված գլխավոր հատակագիծ, հանույթի կտրվածքներով անհրաժեշտ միջոցառումներ և կառուցվածքների տեղադիրքերով:<br>➢ **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>➢ **Ճարտարապետաշինարարական մաս** |

| | | |
|---|---|---|
| | | Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, հատակագծեր, նկարագրեր<br>- Եռաչափ մոդելավորում<br>➢ **Կոնստրուկտիվ մաս**<br>Կոնստրուկտիվ լուծումներ՝ հիմնական բնորոշ հատվածների<br>- Կոնստրուկտիվ լուծումներ առաջին հարկի 0.000 նիշից ցածր հատվածի, ներառյալ աշխատանքային փաստաթղթեր և նշված հատվածի ծավալաթերթ-նախահաշիվ<br>- Առաջարկվող հիմքերի տեսակների վերաբերյալ, անհրաժեշտ հիմնավորունով<br>- Երկաթբետոնյա շրջանակների վերաբերյալ առաջարկներ՝ կտրվածքի չափեր և այլն<br>- Արտաքին պատերի կառուցման ձևավորման և նյութի առաջարկներ<br>- Հնարավորության դեպքում կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>➢ **Արտաքին ինժեներական** ցանցերի լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր, որոնք անհրաժեշտ կլինեն մատակարար ընկերություններից տեխնիկական պայմանների ձեռք բերման, հիմնվելով 8-րդ բաժնով նախատեսված ուսումնասիրության արդյունքներով:<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>➢ **Ծրագրի նախնական ֆինանսական գնահատում** |
| 14. | **Փուլ 2- «Աշխատանքային փաստաթղթեր»** | **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>**<br>- **Ընդհանուր բացատրագիր հատոր**<br>- Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ,<br>- Ելակետային տվյալներ և փաստաթղթեր<br>- Կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>- բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք<br>- և այլն<br>- **Գլխավոր հատակագծի մշակում**<br>- **Ճարտարապետաշինարարական մաս**<br>- Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, առաստաղների արտացոլված հատակագծեր, մասնագրեր և մանրամասն հանգույցներ /այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ/<br>- Եռաչափ մոդելավորում<br>- Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ, որը պետք է ներառված լինի նախահաշվում)<br>- **Կոնստրուկտիվ մաս**<br>- Կոնստրուկտիվ լուծումներ,<br>- կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>- **Ինժեներական** (ներքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)<br>սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման, հրդեհաշիջման, ջեռուցման, էլեկրամատակարարման, հողանցման, օդափոխության, օդորակման, սառնամատակարարման՝ ըստ պահանջի, տեսահսկման, գազամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, կապի և անվտանգության համակարգերի և այլն, Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>- **Արևային ջրատաքացման համակարգի նախագիծ**<br>- **Ֆոտովոլտային համակարգի նախագիծ**<br>- **Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ՝** |

| | | |
|---|---|---|
| | | ներառյալ սարք-սարքավորումներ, ՀԾԿ-ի կողմից սահմանված միանվագ ծախսեր և այլ անուղղակի ծախսեր<br>- **Գնահատված ծավալաթերթ-նախահաշիվ** (միավոր գներով) / երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակները առանձնացված/<br>- **Ծավալաթերթ** / երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակները առանձնացված<br>- Շինարարության կազմակերպման նախագիծ<br>- Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ<br>- Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ<br>- Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:<br>- Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ<br>- Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշխիքային ժամկետների ցանկ<br>- Ինտերիերի դիզայն ընդհանուր տարածքների, բոլոր տիպային սենյակների ներառմամբ՝ գունային լուծումներով (յուրաքանչյուր տիպի տիպային սենյակների համար հնարավոր է 1 ընդհանուր դիզայնի օրինակ), ներառյալ կահավորման նախագծերը ու կահույքի դիզայնի աշխատանքները, ընդ որում ներկայացնելով կահավորանքի մանրամասն տեխնիկական բնութագրեր և գունային լուծումներ /3D պատկերների ներկայացում բարձր որակի կատարման ու ներկայացման ապահանջով/: |
| 15 | **Համաձայնեցումներ** | **1.** ՀՀ առողջապահության նախարարություն<br>**2.** ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին<br>**3.** ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին<br>**4.** Ինժեներական հաղորդակցուղիների մատակարար կազմակերպություններ՝ ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, կապի համակարգեր<br>**5.** ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն,<br>**6.** Մարզպետարան և համայնքապետարան և այլն: |
| 16 | **Ծառայությունների մատուցման ժամկետ (տևողություն)** | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և պատվիրատուին հանձնման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 180 օրացուցային օր, որից **50 օր Փուլ 1-ի «Նախագծի» համար:** |
| 17 | **Նախագծի լրամշակում** | ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ և համալիր քաղաքաշինական փորձաքննության:<br>Ըստ անհրաժեշտության, եթե<br>1. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական ***պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»***, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:<br>2. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով, եթե տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 20-օրյա ժամկետում: |
| 18 | **Մատուցման ծառայությունների ֆինանսական ապահովում** | **Փուլ 1-ում «Նախնական նախագիծ» պատվիրատուին է ներկայացվում նախագծի էսքիզային տարբերակը՝ համաձայն 13 կետի, որը պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո, Խորհրդատուին կվճարվի ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքի 20%-ը:** |

| | | |
|---|---|---|
| | | Մնացած ֆինանսավորումը կկատարվի քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը, համալիր փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո: |

**Ավարտված նախագիծը ներկայացվում է պատվիրատուին ստորև ներկայացվող պահանջներով քանակություններով՝**

| Գիրք | Անվանում | Բովանդակություն | Քանակ | |
|---|---|---|---|---|
| | | | Հայերեն | Ռուսերեն |
| Գիրք-1 | Բացատրական մաս | Բացատրագիր, ելակետային տվյալներ հաշվարկներ, վերլուծություններ, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք և այլն: Բաժին 7, 8, 9 և 13-ի (փուլ 1) նշված եզրակացությունները,հաշվարկները և նկարագրերը և բաժին 14-ի (փուլ 2) «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» կետ 1-ում և 11-ից 14 կետերում նշված նյութերը և միջոցառումների նակարագրերը: | 6 | 2 |
| Գիրք-2* և մաս հատորներ | Գծագրական մաս | Աշխատանքային մանրամասն գծագրեր՝ բաժին 14-ի (փուլ 2) «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» կետ 2, 3, 4, 5, 6, 7 և 12, 13 կետերի պահանջներին վերաբերվող մանրամասն նախագծեր: Գլխավոր հատակագիծ, ուղեգծերի հատակագծեր, երկայնական և լայնական կտրվածքներ, կառույցների և հանգույցների կոնստրուկտիվ լուծումներ, բարեկարգում: Տեղանքի հանույթներ (ուղեգծի հանույթ՝ Մ 1:1000, տարածքի հանույթ՝ Մ 1:500) , երկրաբանական հետազոտություն, տարածքի ուղղածիգ հատակագծում: Չափագրական գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառել լուսանկարներ): Նախագծվող կառույցների հատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներ և այլն Մ 1:100, Մ 1:50, Մ 1:20 : Կոնստրուկտիվ տարրերի գծագրեր, մանրամասն և հավաք մասնագրեր և այլն: | 6 | 6 |
| Գիրք-3 | Աշխատանքային ծավալների ամփոփագիր | Աշխատանքային ծավալների մանրամասն նկարագրումով, ծավալների քանակներով, միավոր և ընդհանրական գների դատարկ սյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելով բոլոր ներառված աշխատանքների ծավալները և միավոր գները, ներառյալ բոլոր անուղղակի ծախսերը, բացի շահույթից և ԱԱՀ-ից: Շահույթը և ԱԱՀ-ն կիրառել ծավալաթերթ-նախահաշվի վերջում: | 3 | 1 |
| Գիրք-4 | Շինարարության կազմակերպում | Ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ, Շինարարության կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությամբ, անհրաժեշտ մարդկային և մեքենա-մեխանիզմների քանակի գնահատմամբ, հիմնական աշխատանքի իրականացման օրացուցային գրաֆիկի կազմման, հենանիշերի աղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվող նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրեր ու նկարագրություններ, հաճախականությունների և այլն: Կատարված աշխատանքների մատակարարված նյութերի խմբաքանակների լաբարատոր ստուգման հաճախականության և նմուշառման տեսակի ու քանակի վերաբերյալ պահանջներ, ըստ գործող նորմերի, նշել պահանջի հիմքերը: | 6 | 2 |
| Գիրք-5 | Նախահաշիվներ | Մանրամասն ըստ օբյեկտների նախահաշիվների կազմում՝ <br>• Ըստ գործող նորմերի | 3 | 1 |

*Գիրք-2-ում հայերեն և ռուսերեն տարբերակները կարող են համատեղվել

– Նախագծանախահաշվային երկլեզու փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ **էլեկտրոնային կրիչով**, տեքստային և գծագրական նյութերը՝ CAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով

